ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 27 » մարտի 2018 թ. N 68-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սաֆարյան Համբարձում-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ, հանձնաժողովի նախագահ

Ղազարյան Գոռ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

Ղազարյան Նորիկ- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Գասպարյան Վալոդյա -հանձնող

Մուրադյան Գուրգեն-ընդունող

Մուրադյան Տիգրան-դպրոցի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Համբարձում Սաֆարյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ